

Մօնաէնէզդրօի Դուլէինիա նաւահանգստին մէջ, Ադրիականի գեղածիծաղ ափերուն վրայ եւ այնտեղ ալ մեռած 1677-ին:

ՄՈՎՍԷՍ ՄԵՆԴԵԼՍԶՈՆ

Վերածնութիւնն ու բողոքականութիւնը նոր կեանք եւ ազատախոհական գաղափարներ ներշնչեցին միջին դարերու թմրած ու ծերացած Եւրոպային, եւ սակայն կեքքօն կարծես անմասն մնաց այդ յառաջդիմական քայլերուն եւ Իսրայէլ կը շարունակէր ապրել իր առանձին կեանքն, առանց ունէ մտաւոր հաղորդակցութեան՝ արտաքին աշխարհին հետ:

Ազատախոհութեան աւազիրաններէն մէկը, Սպինոզա, ծնած է կեթթօի մէջ, եւ սակայն մեծ դանդուածը անտարբեր է եւ միեւնոյն մոլեռանդութեամբ փարած իր ծէսերուն ու հնադարեան սովորութիւններուն:

Սպինոզայէն մէկ դար վերջը՝ ԺԸ. դարի կէսին Գերմանիոյ մէջ կ'ապրէր Մովսէս Մենտէլսոն, կարծահասակ տձեւ մարդ մը, որ առերեւոյթն ունէ յարմարութիւն չունէր ազգային կամ միջազգային կեանքի մէջ ունէ գեր խաղալու: Իր մանուկ հասակն անցած էր կէթթօի մէջ. միակ դրաղումն եղած էր ծալապատիկ նստիլ վարժապետին առջեւ եւ Աստուածաշունչ կարդալ առանց բառ մը հասկնալու: Երբայեքէն չառոնց մեռած էր եւ սրբապղծութիւն էր Թօրան երբայեքէնի կամ եէտիւնէի թարգմանել:

Միւսնոյն էր նաեւ քրիստոնէից մէջ Լուտերէն յառաջ. արդիւուած էր Վիւլիամը (լատիներէն Ս. Գիրք) ժողովրդական բարբառի վերածել, եւ այսօր կաթոլիկներուն արգելուած է Ս. Գիրք կարդալ: Մեծ իրարանցում տեղի ունեցաւ իրր կէս դար առաջ Յունաստանի մէջ երբ թագուհիի փափաքով Ս. Գիրքն աշխարհաբար յունարէնի վերածել փորձուեցաւ:

Մեր մէջ ալ մոլեռանդները հաշտ աչքով չէին նայեր Ամերիկացի միսիոնարներու հրատարակած աշխարհաբար Աւետարաններուն, եւ Թուրքիոյ մէջ ալ Մուսթաֆա Քեմալ մը պէտք եղաւ որ արարերէն Ղուրանը թրքերէնի վերածել համարձակի:

Ըստ բարեպաշտական զգացումներու,

հասկնալու պէտք ալ չկայ արդէն: Բաւական է կարդալ եւ դոյ սորվիլ: Կարդալը ազօթել է եւ ընդունելի Աստուծոյ: Շատ հրէաներ դոյ գիտեն Մովսէսի Հնդամատեանը, որ մօտ 6000 տունէ կը բաղկանայ... Թօրայի դպրոցական շրջանն աւարտելէ վերջ յաջող աշակերտը կը փոխէր Եշիպա, այսինքն՝ թալմուտեան շրջանը: Մենդէլսոն մինչեւ 15 տարեկան մնաց կեքքօի Եշիպային մէջ եւ այնուհետեւ հետեւեցաւ իր բարբիին, որ Բերլին կը փոխադրուէր:

Գիւրլին չէր սակայն հրէայի մը Բերլին մտնելը, եթէ ան չէր կարող ազադուցանել, թէ ինքնաբաւ է: Մենդէլսոնի ամբողջ հարըստութիւնը իր ազօթի առարկաներն ու գիրքերն էին: Այդչեց, պաղատեցաւ Բրանդէնբուրգի դքսն պահապաններուն եւ վերջապէս յաջողեցաւ սիրաչափի զանոնք եւ քաղաք մը տնել:

Քառասուն տարի վերջ այս աղքատ ուսանողն արդէն մեծահամբաւ գերման քաղաքացի մըն էր, որուն արձանը ցայժմ կը զարդարէ Բերլինի հրապարակներէն մին, Լայքնիցի արձանին քովը: Մենդէլսոն առաջին աշխարհաքաղաքացին է, ամենաազատ գաղափարներու տէր եւ անոր լայնախոհ միտքը մեծ ազդեցութիւն դրած է ի նպաստ ազգամիջեան խրտրողական ոգիի բարձման: Քանի փիլիսոփան եւ Լեստիգ իր յաւադոյն բարեկամներն էին:

Առաջին անգամ Մենդէլսոն կրցաւ ցոյց տալ իր անձին օրինակովը, թէ կարելի է թէ՛ լաւ հրէայ եւ թէ՛ միւսնոյն ժամանակ լաւ եւրոպացի ըլլալ: Իր ամբողջ կեանքին մէջ հաւատարիմ մնաց հրէայ ազգութեան եւ, երբ կաթոլիկ բարեկամներու հետ վէճի բռնուէր, չէր քաշուեր անկեղծօրէն յայտարարելու, թէ իր նախնական մաքրութեան մէջ յուզայակաշնութիւն աւելի բարձր էր քան քրիստոնէութիւնը:

Ուրիշ ունէ յաւիտենական ճշմարտութիւն չեմ ճանչնար, կ'ըսէր ան, բացի անոնցմէ, որոնք ոչ միայն կը յղացուին, այլ եւ կրնան ստուգուիլ մարդկային գաղաղութեամբ: Յուդայականութիւնը, կ'ըսէր ան, միայն պատուէրներ եւ օրէնքներ կուտայ երկնահասոյ կեանք մը վարելու համար, բայց ազատ է բը-